«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ՔՀԿ-ՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՔՀԿ-ՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ինկուբատորները միտված են նպաստելու ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դրանք հատկապես օգնում են ՔՀԿ-ներին զարգացնել սեփական կառավարման հմտություններն ու մասնագիտական կարողությունները, նոր գործնական կապեր հաստատել և կրճատել ծախսերը՝ նրանց ռեսուրսներ, ծառայություններ, նոր գիտելիքներ և հմտություններ տրամադրելու միջոցով: Որոշ ՔՀԿ-ներ, հատկապես մարզերում գործող, չունեն բավարար գրասենյակային պայմաններ, համակարգչային տեխնիկա, ինտերնետ, արտաքին կապեր հաստատելու կամ զարգացնելու կարողություն: Այս հնարավորությունները իրենց կընձեռնեն ինկուբատորները: Ինկուբատորները հարթակ են հանդիպումների և համագործակցության հաստատման համար, ուստի նման շփումների արդյունքում ՔՀԿ-ների մոտ կարող են ծնվել նոր գաղափարներ, որոնք նրանք կարող են իրականացնել այլ կազմակերպությունների հետ համատեղ:[1]

ՔՀԿ-ների ինկուբատորներ գործում են տարբեր երկրներում. Լեհաստան, Չեխիա, Հունգարիա, Սլովակիա, Բուլղարիա, Սերբիա, Բելառուս, ԱՄՆ, Ինդոնեզիա, Հնդկաստան, Չինաստան[2] և այլ երկրներ: Նրանք բոլորն ունեն իրենց գործունեության ձևաչափը, առաքելությունը և նպատակը, որոնք շատ բազմազան են:

Եվրոպայում առավելապես գործում է ոչ միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների ինկուբատորների մոդելը, այլ՝ շահույթ հետապնդող (for-profit): Օրինակ, սկսնակ բիզնեսների կամ ՀԿ-ների համար, որոնք իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, կարելի է առանձնացնել «Տաղանդների ինկուբատորը» (Incubator of Talants) Լեհաստանում:[3] Վերջինս բաղկացած է տարբեր ոլորտային փորձագետներից, որոնք իրականացնում են տարբեր բիզնես գործառույթներ: Ինկուբատորը հնարավորություն է տալիս պակասեցնել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ծախսերը և յուրաքանչյուր ձեռներեցի պարտականությունների ծավալը, ինչպես նաև ծանոթանալ միմյանց հետ:

---

[1] https://www.quora.com/What-are-the-advantages-of-a-non-profit-incubator
[2] https://avpn.asia/organisation/non-profit-incubator/
[3] http://fwn.org.pl/en/for-companies.html

Նման մոտեցում է որդեգրել նաև Օդիսեա (Odyssey) Կազմակերպությունը[4], որը գրանցված է Չեխիայում և գործում է նաև մի շարք այլ երկրներում՝ Սլովակիա, Հունգարիա, Բուլղարիա, Սինգապուր: Իրենց մենթորները բիզնես ոլորտից փորձառու պաշտոնյաներ են, ովքեր կամավոր սկզբունքով աջակցում են բիզնես, հասարակական և պետական ոլորտներում զբաղվող կանանց կարողությունների զարգացմանը: Եվ թեև Օդիսեան առաջարկում է վճարովի ծառայություններ, այդուհանդերձ այդ ծառայությունների դրույքաչափը բավականին ցածր է (օրինակ՝ տարեկան 300 Եվրոյի չափով): Ընդ որում, վճարովի ծառայություններ մատուցելը պայմանավորված է կազմակերպության նվազագույն ծախսերի հոգալու հանգամանքով: որպեսզի իր ծախսերը փակվեն:

Հաճախ, մենթորինգի ծրագրերը հիմնական շեշտադրում կատարում են առաջնորդության կարողությունների զարգացման ուղղությամբ: Օրինակ, Բելառուսում[5] գործել է քաղաքացիական հասարակության առաջնորդության մի ծրագիր, որտեղ ՀԿ-ների առաջնորդներին տրվել է աջակցություն՝ դասընթացների, անհատական մենթորության և պրակտիկ գործողությունների տեսքով:

Եվրոպայում հատկապես զարգացած է սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների ինկուբատորների մոդելը, ինչպիսիք են՝ Oksigen Lab-ը և i-propeller-ը Բելգիայում, Ոչ առևտրային կառույցների ինկուբատորը (Non-Profit Incubator) Չինաստանում, Ոչ առևտրային ձեռնարկությունը և Ինքնակայունության Խումբը (Nonprofit Enterprise and Self-sustainability Team) Հունգարիայում և Ռումինիայում և Սոցիալական ձեռնարկատերերի հիմնադրամը (The Foundation for Social Entrepreneurs) Միացյալ թագավորությունում:[6]

Որպես շահույթ չհետապնդող կառույցների ինկուբատորների եվրոպական մոդել հարկ է ընդգծել Սերբիան, որտեղ մի շարք նախաձեռնություններ, որոնք ստացել են գաղափարական, լոգիստիկ և նյութական աջակցություն Սերբիայում Եվրոպական շարժման կողմից, ներկայումս անկախ կառույցներ են և համարվում են անփոխարինելի դերակատարներ Սերբիայում շահույթ չհետապնդող կառույցների սեկտորում: Դրանց թվին են պատկանում Հարավարևելյան Եվրոպայի հասարակական կազմակերպությունների ասոցիացիան (Association of non-governmental organizations in South East Europe (CIVIS)), Տեղական համայնքների կայուն զարգացման դաշինքը (Alliance for Local Communities' Sustainable Development), Եվրոպայի Երիտասարդ ֆեդերալիստները (Young European Federalists), Գործարար կանանց ասոցիացիան

[4] http://www.myodyssey.eu/
[5] http://www.pactworld.org/country/belarus
[6] https://static1.squarespace.com/static/56d2eebbb654f9329ddbd20e/t/5773e624197aea1484daf410/1467213350185/Country_Report_Belgium.pdf

(Association of Business Women), Վնասվածքաբանության միությունը (Victimology Society), Թրանսփերենսի Սերբիան (Transparency Serbia), Alpbah-ի նախաձեռնող խումբը (Initiative Group Alpbah), Կանանց կառավարությունը (Women's Government), Որակյալ կյանքի միությունը (Union for Qualitative Life) և այլն:[7]

Լեհաստանում առկա է շահույթ չհետապնդող կառույցների ինկուբատորների հետևյալ մոդելը. ինկուբատորներում ընդգրկվող ՀԿ-ները պետք է ունենան 1-2 տարվա գործունեության պատմություն և ցուցաբերեն ակտիվություն իրենց ոլորտում: Յուրաքանչյուր ինկուբատորում կարող են ներգրավվել առավելագույնը 16 ՀԿ-ներ, որոնք ինկուբատորի ընձեռնած հնարավորություններից օգտվելու են մեկ տարի: Ինկուբատորին մասնակցող ՀԿ-ները նախքան աշխատանքների մեկնարկը կնքում են համաձայնագիր ինկուբատորը գործարկող կազմակերպության հետ՝ պարտավորվելով լինել ակտիվ և մասնակցել դասընթացներին: Տարվա ընթացքում կազմակերպվում է 10 դասընթացներ, որոնք ընդգրկում են հետևյալ թեմաները. թիմի կառուցում, օրենսդրություն, հարկեր, սոցիալական ձեռնարկատիրություն, երկխոսություն տիմերի և բիզնեսի հետ, հաղորդակցություն, մարդկային ռեսուրսների կառավարում, ռազմավարական զարգացում և ֆոնդերի հայթայթում:

Ինկուբատորներում ընդգրկված ՀԿ-ները օգտվում են մենթորությունից, նախապես առցանց գրանցվելու դեպքում նաև մասնագետի խորհրդատվությունից, ինչպես նաև գրասենյակային հնարավորություններից, համակարգիչներից և ինտերնետից:

Անհրաժեշտ է նաև առանձնացնել Նյու Յորք քաղաքի հիմնադրամի կողմից իրականացվող Ինկուբատոր/Գործընկեր ծրագիրը[8]: Ինկուբատոր/Գործընկեր ծրագրին մասնակցելը ապահովում է առևտրային կառույցների համար այնպիսի զանազան մասնագետների հասանելիություն (ներառյալ՝ համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների), ինչպիսիք են՝ մարդկային ռեսուրսների կառավարման գծով փորձագետները, հաշվապահները, իրավաբանները կամ ոչ առևտրային կառույցների գծով մասնագիտացած մարզիչները (coaches):

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ստեղծվել է Նյու Յորքի Շահույթ չհետապնդող կառույցների համակարգող կոմիտեն (Nonprofit coordinating committee of New York) 1984թ.-ին,[9] որի առաքելությունն է եղել պայքարել կառավարության այն առաջարկի դեմ, համաձայն որի ցանկացել են վերացնել ոչ առևտրային կառույցների կողմից գույքահարկից ազատող դրույթները: Հաջողության հասնելով նշյալում՝ վերջիններս կարողացել են նաև այլ

[7] http://www.emins.org/english/emins-as-incubator-of-ngos
[8] https://www.fcny.org/fcny/core/ip/
[9] https://www.npccny.org/about-us/npccs-history/

հարկատեսակներից ազատվելու այլ դրույթներ ևս ամրագրել օրենսդրությունում: Այնուհետև, ոչ առևտրային կառույցների ինկուբատոր հանդիսացող նշյալ կառույցը իր շահառուներից տեղեկացավ, որ վերջիններս թիրախային տեղեկատվության ստանալու, ուղղորդման և համապատասխան գիտելիքների և հմտությունների ձեռք բերման կարիք ունեն: Այդ նպատակով, ներկայումս նշյալ կառույցը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- Այնպիսի գործնական գործիքների տրամադրում շահույթ չհետապնդող կառույցներին, ինչպիսիք են՝ Տեղեկատվական տվյալների բանկը (Information Databank), որի շրջանակներում հասանելի է տեղեկատվություն գործող ոլորտային օրենսդրական նորմերի, օրինակ՝ ջատագովության իրականացման, հարկային դաշտի, ինչպես նաև ներքին ազդարարման, շահերի բախման ընթացակարգերի և այլնի վերաբերյալ, և Ոչ առևտրային կառույցների տեղեկատվական կենտրոնը (Non-profit Outsourcing Clearinghouse):
- Ծառայությունների մատուցում շահառուներին, որոնք զարգացնում են ոչ առևտրային կառույցների կարողությունները, ինչպիսիք են՝ համապատասխան ուսուցումները, կրթությունը և փորձագետների կողմից տեղեկատվության տրամադրումը (կառույցը տարեկան իրականացնում է 50-60 սեմինար/ուսուցում):
- Որոշակի ծրագրերի խմբակային գնման հնարավորության տրամադրում, որի շնորհիվ տնտեսվում են ոչ առևտրային կառույցների ռեսուրսները:
- Ոչ առևտրային կառույցների գերազանցության մրցանակի տրամադրում, որը հիմնված է ոչ առևտրային կառույցների գերազանց կառավարման 8 թիրախային ոլորտների վրա:

Ամփոփելով ինկուբատորների գործունեության միջազգային փորձը և վերոնշյալ փորձը տեղայնացնելով ՀՀ-ում և «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում, պետք է փաստել, որ միանշանակ առկա է անհրաժեշտություն ոչ առևտրային կառույցների՝ **քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար ստեղծել ՔՀԿ ինկուբատորներ:**

2. «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐ

ՔՀԿ ինկուբատորները գործարկվելու են Ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի (ՍԻՎԻՏԱՍ), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի և Հայաստանի համայնքների միության հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Առաքելություն

Մասնագիտական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել Հայաստանի ՔՀԿ-ներին՝ վերջիններիս ծրագրի թիրախ 9 ոլորտների և ներքոնշյալ 4 թեմատիկ կարողությունների զարգացման նպատակով.

- Հանրային բյուջեների և քաղաքականությունների մոնիտորինգ.
- Փաստարկված քաղաքականությունների մշակում.
- Կոալիցիաների ստեղծում և/կամ զարգացում.
- Հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական մասնակցություն/ երկխոսություն Կառավարության և ՏԻՄ-երի հետ:

Գործառույթներ

Ինկուբատորները կիրականացնեն հետևյալ գործառույթները.

- ՔՀԿ-ների 4 թեմատիկ և 9 ոլորտների կարողությունների նախնական գնահատում.
- ՔՀԿ-ների համար անհատական գործողությունների պլանի մշակում՝ ՔՀԿ-ի և մենթորի մասնակցությամբ.
- գործնական սեմինար-քննարկումներ, վեբինարներ Հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից ՔՀԿ-ների համար անցկացված հավատարմագրային դասընթացի շրջանակներում ուսուցանված թեմաների պրակտիկ գործիքների կիրառման վերաբերյալ, որոնք ներառելու են՝ կոալիցիաների ստեղծումը և զարգացումը, փաստարկված քաղաքականությունների մշակումը, հանրային

վերահսկողությունը/մոնիթորինգը, քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական մասնակցությունը/երկխոսությունը Կառավարության և ՏԻՄ-երի հետ.

- ինկուբատորների գործողությունների պլանին և ժամանակացույցին համապատասխան մասնագիտական քննարկումներ ծրագրային թիրախ 9 ոլորտներում.
- թեմատիկ և ոլորտային դասախոսությունների հրավիրված մասնագետների ու դասախոսների կողմից.
- անհատական մենթորինգ, ՔՀԿ-ների համար մենթորական նիստերի անցկացում, ոլորտային մենթորության իրականացում ինկուբատորների անդամ յուրաքանչյուր ՔՀԿ-ի համար.
- անհատական այցեր և գործնական հանդիպումներ՝ պետական և տեղական մարմիններ, հասարակական կազմակերպություններ, բիզնես կազմակերպություններ՝ ըստ ՔՀԿ-ների գործունեության ոլորտային ուղղությունների.
- մարզերում գործող ինկուբատորների անդամ յուրաքանչյուր ՔՀԿ-ների եռամսյա այցերի կազմակերպում Երևան՝ հանդիպումների և քննարկումների իրականացման նպատակով.
- ՔՀԿ-ների հաջողության պատմությունների ներկայացում և քննարկում թեմատիկ ոլորտներում.
- ՔՀԿ-ներին իրավաբանական, հարկային և ՔՀԿ-ների 4 թեմատիկ ու 9 ոլորտների կարողությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրում ոլորտային օրենսդրության, և հատկապես, ՀԿ-ների ոլորտի վերջին օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ.
- տեղեկություն տրամադրում շահերի բախման, ազդարարման և այլ կազմակերպահիրավական ու ՔՀԿ-ների ներքին կարողությունների, այդ թվում նաև ֆոնդերի հայթայթման զարգացման ընթացակարգերի սահմանման վերաբերյալ.
- սոցիալ-մշակութային գործունեության իրականացում.
- գրասենյակային տարածքի, համակարգիչների ու համացանցի մատչելիության ապահովում.

- մրցութային հիմունքներով փոքր ենթադրամաշնորհների տրամադրում ինկուբատորներին մասնակից ՔՀԿ-ներին.
- ՔՀԿ-ների 4 թեմատիկ և 9 ոլորտների կարողությունների վերջնական գնահատում.
- ամենամյա խրախուսում ՔՀԿ-ներին իրենց գործունեության համար «Կոալիցիաների ստեղծում և զարգացում», «Փաստարկված քաղաքականությունների մշակում», «Հանրային վերահսկողություն/մոնիթորինգ» և «Քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական մասնակցություն/երկխոսություն Կառավարության և ՏԻՄ-երի հետ» անվանակարգերում:

Անհրաժեշտ է նաև հավելել, որ Ծրագրի շրջանակներում ձևավորված ՔՀԿ ինկուբատորները յուրահատուկ են և կարող են որակվել որպես «մի քայլ առաջ»: Ծրագրի ՔՀԿ ինկուբատորների աշխատանքներում ներգրավվելու են նաև ոլորտային մենթորներ և հրավիրված մասնագետներ ու դասախոսներ, ովքեր խորացնելու են ոլորտային ՔՀԿ-ների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ծրագրի թիրախ ոլորտների վերաբերյալ:

Հետևաբար, վերջիններս կարող են մոդել հանդիսանալ այլ երկրներում համանման ՔՀԿ ինկուբատորներ ստեղծելու և գործարկելու համար:

3. ՔՀԿ ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԹԻՄԸ

Սույն ռազմավարությամբ նախատեսված ՔՀԿ ինկուբատորներում իրականացվող աշխատանքներում ներգրավվելու են ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների ղեկավարներ, տեղական, միջազգային, ինչպես նաև «Ագորա Սենթրըլ Յուրըփ» չեխական ՀԿ-ի փորձագետներ և հրավիրված մասնագետներ՝ ներկայացնելու Կոալիցիաների ստեղծման և զարգացման, փաստարկված քաղաքականությունների մշակման, հանրային վերահսկողության/մոնիթորինգի, քաղաքականությունների մշակման գործընթացում Կառավարության և ՏԻՄ-երի հետ կառուցողական մասնակցության/երկխոսության ոլորտներում իրենց ունեցած պրակտիկ փորձն ու գրանցած հաջողության պատմությունները:

4. ՔՀԿ-ՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ինկուբատորներին մասնակցելու համար ՔՀԿ-ները ընտրվելու են հետևյալ չափանիշների հիման վրա համար.

- Հայաստանում ամերիկյան համալսարանի կողմից ՔՀԿ-ների կարողությունների զարգացման նպատակով անցկացված հավաստագրային դասընթացներին հաճախելիությունը.
- Հայաստանում ամերիկյան համալսարանի կողմից ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն նպատակով անցկացված հավաստագրային դասընթացներին գիտելիքի ստուգման մասնակցության գնահատականը.
- գործունեության ոլորտների համապատասխանությունը Ծրագրի թիրախային ոլորտներին.
- տարածքային գործունեության վայրը։

5. ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԱՅՐԸ

Ինկուբատորները գործարկվելու են Իրավաբանների հայկական ասոցիացիայի Երևանի, Գյումրու, Վանաձորի, Գավառի և Կապանի գրասենյակներում տարածքային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար։

Տավուշի մարզի ՔՀԿ-ները հնարավորություն կունենան օգտվելու Վանաձորում գործող ինկուբատորից, Արագածոտնի ՔՀԿ-ները՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի ինկուբատորներից՝ ըստ ՔՀԿ-ների տարածքային դիրքից, Վայոց ձորի ՔՀԿ-ները՝ Կապանի կամ Երևանի ինկուբատորից։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՔՀԿ-ները տեղակայված են մարզի տարբեր տարածքներում, ուսուցումները հիմնականում կանցկացվեն հեռավար մեթոդի կիրառմամբ։

Նշված գրասենյակները հագեցած են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և հարմար են հանդիպումների, սեմինարների և վեբինարների անցկացման համար։ Հնարավորինս շատ ՔՀԿ-ներ ընդգրկելու համար նրանք համագործակցելու են ՔՀԿ-ների հետ ռոտացիոն սկզբունքով։

6. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվում է, որ Ինկուբատորների ավարտից հետո, ՔՀԿ-ները կտիրապետեն.

- Հանրային բյուջեների և քաղաքականությունների մոնիտորինգի.
- Փաստարկված քաղաքականությունների մշակման.

- Կոալիցիաների ստեղծման և/կամ զարգացման.
- Հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում Կառավարության և ՏԻՄ-երի հետ կառուցողական մասնակցության/երկխոսության.
- ՔՀԿ այլ կարողությունների.
- Ծրագրի 9 թիրախային ոլորտների.

հիմնախնդիրներին, մարտահրավերներին, պրակտիկ գործիքակազմին, տեղական և միջազգային փորձին, ինչպես նաև ձեռք կբերեն արժեքավոր կապեր, կմշակեն և կունենան վերոհիշյալ հարցերի վերաբերյալ իրենց ռազմավարություններն ու գործողությունների իրականացման պլանները:

7. ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Ինկուբատորները գործարկվում են հետևյալ հասցեներում.

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակային տարածք 2

Հեռախոս (374 10) 540199

Հեռապատճե (374 10) 580299

Էլ. փոստ info@armla.am

Ինկուբատորի համակարգող՝ Մարատ Ատովմյան

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1

Հեռախոս/Հեռապատճե (374 322) 22317

Էլ. փոստ vanadzor@armla.am

Ինկուբատորի համակարգող՝ Արթուր Սուքիասյան

ՀՀ, Շիրակի, մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2

Հեռախոս/Ֆաքս (374 312) 58236

Էլ. փոստ gyumri@armla.am

Ինկուբատորի համակարգող՝ Վիկտորիա Եղոյան:

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բոշնաղյան 56/7

Հեռախոս/Հեռապատճեն (374 264) 25503

Էլ. փոստ gavar@armla.am

Ինկուբատորի համակարգող՝ Լիանա Մակվեցյան:

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72

Հեռախոս/Հեռապատճե (374 285) 52511

Էլ. փոստ kapan@armla.am

Ինկուբատորի համակարգող՝Վաչե Բաղդասարյան: